ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 37-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Մարտուն Մովսեսի Ծատինյանի դիմումը, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, սեփականության իրավունքի N 2275249 վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Մարտուն Մովսեսի Ծատինյանի կողմից առուվաճառքի պայմանագրով ձեռք բերված, քաղաք Ալավերդի, Էվոյան 40 շենքի դիմաց գտնվող ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Էվոյան փողոց, 9/1 ավտոտնակ փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. փետրվարի 03

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 38-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 29.12.2021Թ. N 414-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Ալավերդի համայնքի ղեկավարի 29.12.2021թ. «Սեփականության իրվունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունն օրինականացնելու մասին» N 414-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն. որոշման 2-րդ կետում «84234 (ութսունչորս հազար երկու հարյուր երեսունչորս)»-ի փոխարեն կարդալ «140391 (հարյուր քառասուն հազար երեք հարյուր իննսունմեկ)»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. փետրվարի 03

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 39-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, 17-րդ հոդվածի դրույթներով ***որոշում եմ՝***

Գումարել Ալավերդի համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ 2022 թվականի փետրվարի 11-ին, ժամը 16.00-ին, համայնքապետարանի վարչական շենքում՝ հետևյալ օրակարգով.

1. Ալավերդի համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 11-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

2. Համայնքի ղեկավարի հաղորդումն Ալավերդի համայնքի 2021 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

3. Ալավերդի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 109-Ն որոշմամբ հաստատված Ալավերդի համայնքի 2022 թվականի բյուջեի մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

4. Ալավերդի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 107-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

5. Ալավերդի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 108-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

6. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

7. Ալավերդի համայնքի ավագանու 06.05.2019թ. N 30-Ա և 02.06.2021թ. N 52-Ա որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

8. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասում մարզադաշտ կառուցելու համար հողամաս առանձնացնելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. փետրվարի 08
ք. Ալավերդի